ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1956 Общественные науки

Ե. Ցուցերյան

«ՆՈՐ ԽՈՍՔ» ԹԵՐԹԻ ՀԻՍՆԱՄՅԱԿԸ

Հայերեն բոլշևիկյան առաջին լեգալ «Կայծ»-ի հետ միասին նրա անմիջական հաջորդ «Նոր խոսք» թերթը առանձնահատուկ տեղ է գրավում 1905--1907 թ. հայ բոլշևիկյան մամուլի պատմության մեջ։

1906 թ. հուլիսի 13-ի համարում Ստ. Շահումյանի «Պետական դումայի արձակումը» խորագրով առաջնորդող հոդվածի հրապարակման պատճառով Թիֆլիսի դատաստանական պալատի որոշմամբ արգելվեց «Կայծ»-ի հետագա հրատարակությունը։ Նրա վերջին՝ 47-րդ համարը լույս տեսավ օգոստոսի 6-ին (19-ին)։ Ցարական կառավարության այդ միջոցառումը անսպասելի չէր բոլշևիկների համար։ Կոնսպիրատիվ պայմաններում նրանք նախապատրաստել էին արգելվելիք թերթի հաջորդը։ Պարտության հանձնարարությամբ դեռ «Կայծ»-ի լույս տեսնելու օրերին բոլշևիկ Ա. Խումարյանը դիմել էր ցարական կառավարությանը՝ լեգալ թերթ հրատարակելու իրավունք ստանալու համար։ 1906 թ. մայիսին տրվեց այդ իրավունքը և երբ «Կայծ»-ը արգելվեց, տասն օր հետո լույս տեսավ «Նոր խոսք» հայերեն բոլշևիկյան լեգալ երկրորդ թերթի առաջին համարը[1]։

Ինչպես «Կայծ»-ի, այնպես էլ «Նոր խոսք»-ի խմբագրությունը գլխավորում էին Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը։ Թերթի ակտիվ աշխատակիցներն էին Հ. Հակոբյանը, Ս. Կասյանը, Ռ. Դաշտոյանը, Ա. Մռավյանը, Ա. Խումարյանը, Մ. Մելիքյանը («Դեդուշկա»), Մ. Միրաքյանը («Շանթ») և ուրիշներ։

«Նոր խոսք» թերթն ուներ «Ռուսաստանի կյանք», «Կովկասյան կյանք», «Թիֆլիսի կյանք», «Գուսակցական կյանք», «Միջազգային կյանք», «Մամուլ», «Հրապարակախոսություն», գեղարվեստական և այլ բաժիններ։

Ինչպես բոլշևիկյան բոլոր թերթերը, այնպես էլ հայերեն «Նոր խոսք»-ը աշխատավորների համար հանրամատչելի տպագիր մի օրգան էր։ Առաջին ռուսական ռևոլյուցիայի տարիներին Անդրկովկասում հայերեն լեզվով լույս էին տեսնում բուրժուական և մանր բուրժուական մի շարք թերթեր և ամսագրեր, սակայն նրանցից ոչ մեկը մոտիկ չէր կանգնած ժողովրդական մասսաներին, ինչպես «Նոր խոսք»-ը և բոլշևիկյան մյուս թերթերը։ «Նոր խոսք»-ը հետևողականորեն լուսաբանում էր երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի, շարունակվող բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հետ կապված խնդիրները։ Նա պատասխան էր տալիս հայ աշխատավորների հրատապ և հուզող հարցերին, դաստիարակում նրանց մարքսիզմի ուսմունքով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով։

---

[1] «Նոր խոսք»-ը լույս է տեսել ընդամենը տասնհինգ համար, 1906 թ. օգոստոսի 18-ից (31-ից) մինչև նույն թվականի սեպտեմբերի 21-ը (հոկտեմբերի 3-ը)։

Ռևոլյուցիայում պրոլետարիատի հեգեմոն դերի ընդգծմանը, երկրում դասակարգային պայքարի ծավալմանը և ռևոլյուցիայի տակտիկական խնդիրներին էին նվիրված Թերթում լույս տեսած «Ռևոլյուցիայի մերկացումները», «Ագրարային հարցը և կառավարությունը», «Աղաղակությունը և ռեֆորմները», «Կոիվ իշխանության համար», «Ներկա մոմենտը և մեր տակտիկան» վերնագրերով առաջնորդողները, հոդվածները և բաժինների բազմաթիվ ինֆորմացիաները։

Երկրի պրոլետարիատի, գյուղացիության և զինվորների հերոսական պայքարը սիստեմատիկաբար լուսաբանելու հետ միասին «Նոր խոսք»-ի խմբագրությունը կարևոր տեղ էր հատկացնում Հայաստանի աշխատավորների ռևոլյուցիոն ելույթներին։ Թերթի լույս տեսնելու օրերը զուգադիպեցին Ալավերդու 4500 պղնձագործ բանվորների ընդհանուր գործադուլին[1], որի ընթացքի մասին Թերթում հրապարակվեցին մի քանի հոդվածներ, նամակներ, ինֆորմացիաներ և այլն։ Բացի այդ՝ գործադուլավորներին և նրա կոմիտեին օգնելու, ագիտացիոն, պրոպագանդիստական աշխատանքներն ուժեղացնելու նպատակով՝ ՌՍԴՐՊ Կովկասյան միության կոմիտեի հետ միասին «Նոր խոսք»-ի խմբագրությունից Ալավերդի մեկնեցին Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և այլ բոլշևիկներ։ Նրանց ղեկավարությամբ պայքար էր ծավալվում գործադուլի վիժեցմանը ձգտող մենշևիկ-դաշնակցական տարրերի դեմ։ Համառ պայքարից հետո 1906 թ. օգոստոսի վերջին, ինչպես հաղորդում էր Ստ. Շահումյանը Ալավերդուց ուղարկած իր նամակում, գործադուլը մի շարք պատճառներով ճնշվեց։ «Մենք չենք խոսում զորքի ու թնդանոթների մասին,— նշում էր Ստ. Շահումյանը,— որովհետև նրանք անխուսափելի են ամեն մի փոքր ի շատե խոշոր գործադուլի ժամանակ, նրանք միշտ պատրաստ են ծառայելու կապիտալի շահերին և խեղդելու բանվորների ամեն մի օրինավոր ու արդարացի պահանջը»[2]։

«Նոր խոսք» Թերթի տարբեր համարներում տպագրված մի շարք հոդվածներում մերկացվում էր դաշնակների ողջ գործունեությունը 1906 թվականին, նրանց խմբապետների՝ ժողովրդի նկատմամբ գործադրած բռնությունները, կողոպուտները և այլն։

«Նոր խոսքի» էջերում պարբերաբար դետեղվել են ագրարային հարցին, գյուղում ծավալվող ռևոլյուցիոն շարժումներին նվիրված բազմաթիվ առաջնորդողներ, խմբագրականներ և առանձին հեղինակների հոդվածներն ու նամակները։ «Ագրարային հարցը և կառավարությունը» խորագրով առաջնորդող հոդվածում[3] Թերթը ցույց տալով երկրի, ինչպես և Անդրկովկասի գյուղացիության հոգաղուրկ վիճակը, ընդգծում էր, որ կառավարությունը թեև ագրարային հարցը քննելու համար տեղափոխել է Պետական դումա, սակայն ոչ վերջինս և ոչ էլ ցարիզմը ի վիճակի չեն լուծել այդ հարցը։ Հողային պրոբլեմը կարող է լուծել միայն ռևոլյուցիան։

«Սոցիալիստ», «Դաշնակցությունը գյուղերում» վերնագրով Երևանից ուղարկված ընդարձակ հոդվածաշարքում (№№ 3 և 4) նկարագրված են մասնավորապես գյուղացիության տնտեսական վատթար պայմանները և

[1] «Նոր խոսք», № 1։
[2] Նույն տեղում, № 6։
[3] «Նոր խոսք», № 3, 1906 թ.։

Նրանց մի շարք ելույթները կալվածատերերի ու տեղական իշխանությունների դեմ։ «Նամակ Լոռուց» (№ 12) վերնագրով թղթակցության հեղինակը նշում է, որ 1906 թ. սեպտեմբերի 8-ին Կուրթան գյուղի գյուղացիները կալվածատեր Խանադովին ներկայացրել են վճռական պահանջ՝ իրենցից խլված հողերը և ջրաղացը վերադարձնելու մասին։ Մերժելով գյուղացիներին կալվածատերը սպառնացել է իշխանությունների և Լոռվա դաշնակցական լիազորի անունից։ Ուշագրավ է Ս. Սպանդարյանի «Մեր դերը գյուղերում» խորագրի տակ թերթի 8 և 14 համարներում տպագրված ընդարձակ հոդվածը, որտեղ ընդգծվում է գյուղացիության, որպես պրոլետարիատի դաշնակցի խոշոր դերը, և որ սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիան պետք է ղեկավարի գյուղացիության դասակարգային պայքարը։ Առավել ևս դա վերաբերում է հայ գյուղին, որտեղ բացի սոցիալ-դեմոկրատներից, գործում են նաև հակապրոլետարական պարտիաներ ու խմբեր։ Գյուղացիությունը դարձնել ռևոլյուցիոն,— եզրափակում է հոդվածագիրը,— նշանակում է նրան ընդգրկել ակտիվ գործողության մեջ, իսկ դա իր հերթին պահանջում է ամուր կազմակերպություն, որն ընդունակ լինի առաջ տանել ռևոլյուցիոն շարժումը ոչ թե անջատ, անձև, տարերային, այլ միասնական, պլանավորված և նախամտածված կերպով։

1906 թ. սկիզբը, ամառն ու աշունը նշանավորվեցին ցարական բանակի զինվորների ու նավաստիների մեջ ծավալվող ռևոլյուցիոն բուռն ելույթներով։ Այդպիսի հուզումներ տեղի ունեցան նաև Անդրկովկասում, այդ թվում և Ալեքսանդրապոլի, Երևանի, Ղարսի, Սարիղամիշի և Հայաստանի այլ վայրերի կայազորների զինվորների մեջ։ Այդ բոլորի մասին բացառիկ հետևողականությամբ էին գրվում բոլշևիկյան տպագիր օրգաններում։ «Նոր խոսք»-ի «Ռուսաստանի կյանք», «Կովկասյան կյանք», «Թիֆլիսի կյանք» բաժինները պարբերաբար հաղորդումներ էին տպագրում զինվորների մեջ խորացող դժգոհությունների, նրանց ելույթների մասին։ «Շուրջբալթյան երկրները հեղափոխությունից առաջ և այժմ», «Կոիվ իշխանության համար», «Գեներալ Տրեպով», «Գործը տարված է», «Օրվա խնդիրներ» և այլ հոդվածներում բերվում էին զինվորների ռևոլյուցիոն պայքարի ու ելույթների բազմաթիվ օրինակներ։ «Նոր խոսքը» բոլշևիկների կենտրոնական «Պրոլետարի» թերթից արտատպեց Վ. Ի. Լենինի «Փոթորկից առաջ» խորագրով առաջնորդող հոդվածը։

Պրոլետարիատի, գյուղացիության և ցարական բանակի զինվորների 1906 թ. ռևոլյուցիոն պայքարի ընթացքում երկրում ծավալվում էր նաև Պետական դումայի ընտրական կամպանիան։ Բոլշևիկների՝ Դումայի նկատմամբ վարած տակտիկան, որը բխում էր պրոլետարիատի կենսական շահերից, իր լայն արտացոլումն էր գտնում բոլշևիկյան պարբերական մամուլում։

«Նոր խոսք»-ը մերկացնում էր ոչ միայն Պետական դումայի և նրա հակաժողովրդական պարտիաների ռեակցիոն բնույթը, այլև ցույց էր տալիս Դումայի անզորությունը՝ վճռելու երկրի տնտեսական ու ժողովրդական մասսաներին հուզող կենսական խնդիրները։ Երբ ցարական կառավարությունը ցրեց «անհնազանդ» Դուման, «Նոր խոսք»-ում լույս ընծայած «Ներկա մոմենտը և մեր տակտիկան» առաջնորդողում (№ 14) Ստ. Շահումյանը մերկացրեց երկիրը կոնստիտուցիոն ուղիով, Դումայի միջոցով

վերափոխելու մենշևիկների դավաճանական տակտիկան և ընդգծեց, որ բոլշևիկները պրոլետարիատին ցույց են տալիս երկրի տնտեսական-քաղաքական պայմանները վերափոխելու ռևոլյուցիոն լայն ճանապարհը։

«Նոր խոսք»-ի խմբագրությունը կարևոր տեղ էր հատկացնում նաև գիտության, արվեստի և կուլտուրայի հարցերին։ Բնորոշ է այդ կապակցությամբ Ս. Սպանդարյանի «Դպրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան» վերնագրով վերին աստիճանի արժեքավոր հոդվածաշարքը (№№ 3, 4, 5 և 6)։

Արտասահմանյան երկրների աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը լայն կերպով լուսաբանվում էր «Նոր խոսք»-ի «Միջազգային կյանք» բաժնում, ինֆորմացիաներում, տարբեր հեղինակների և խմբագրական հոդվածներում։ Թերթը գրում էր 1906 թ. հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Բելգիայի Բրյուսել քաղաքի բազմահազար բանվորների հուժկու դեմոնստրացիայի, Իտալիայի գյուղացիների ռևոլյուցիոն շարժման, Անգլիայի Ուելսի հանքագործների բազմամարդ միտինգի մասին, որտեղ ընդունվել էր Ռուսաստանի ռևոլյուցիոն ժողովրդին ուղղված ողջույնի բանաձև։

Ֆրանսիայի Լուարի և Դրոմի դեպարտամենտներում ռազմական զորաշարժերի ժամանակ,— գրում է «Նոր խոսք»-ը,— տեղի է ունեցել ծառայության ժամկետը լրացրած զինվորների ցույց և ապստամբություն։ Գործադուլային ուժեղ պայքար են ծավալել նաև Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքի բանվորները, որոնք գրոշներով, լոզունգներով, ինտերնացիոնալ երգի հնչյունների տակ անցել են քաղաքի փողոցներով։ Թերթը հաղորդում էր (№№ 11 և 14) նաև Ռումինիայի բանվորական շարժման ու սոցիալ-դեմոկրատական պարտիայի գործունեության, Հոլանդիայի Ամստերդամ քաղաքում կայացած աշխատավորների 15,000-անոց միտինգի և Եվրոպայի երկրներում ծավալվող աշխատավորների ռևոլյուցիոն ելույթների մասին։

Վերը բերված բոլոր փաստերը վկայում են,— ընդգծում էր թերթը,— ռուսական ռևոլյուցիայի խորը ազդեցության, անդրադարձումների և այն արձագանքի մասին, որը տեղի է ունեցել 1905—1907 թ.թ. միջազգային ամբողջ կյանքում։ Ռուսական մեծ ռևոլյուցիան հանդիսանում է ամբողջ մարդկության, բոլոր երկրների աշխատավորների քաղաքական զարթոնքի ու վերածնության 20-րդ դարի նախադուռը։ Եվրոպան և Ասիան շաղկապող երկրի՝ Ռուսաստանի պրոլետարիատի և աշխատավորների համառ հերոսական պայքարը, ռևոլյուցիոն վիթխարի շարժումը մեծագույն ուժգնությամբ ցնցեց, թափահարեց մարդկության մթնոլորտը, թարմ ու կենսունակ հոսանք մացրեց զսռամյալ բուրժուական Եվրոպայում, որի պրոլետարիատը նոր ուժ, բազմապատիկ եռանդ է ստանում և նետվում պայքարի մեջ[3]։ Մեծ է Ռուսական ռևոլյուցիայի ազդեցությունը նաև Ասիայի ժողովուրդների վրա,— եզրափակում է «Նոր խոսք»-ը,— արթնացել են Չինաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի, Կուբայի և մյուս երկրների ժողովուրդները, նրանք նոր կյանք, նոր հարաբերություններ են ուզում ստեղ-

[1] Տես «Նոր խոսք», № 10, 10 սեպտեմբերի։

[2] «Նոր խոսք», № 13, 17 սեպտեմբերի։

[3] «Նոր խոսք», № 12, 15 սեպտեմբերի, «Հեղափոխության անդրադարձումները» վերնագրով առաջնորդողը։ ընդգծումները մերն են։

ծել։ Ռուսաստանի ռևոլյուցիան մարդկությունը բաժանում է երկու հակադիր մասերի։ Բոլոր շահագործողները անիծում են Ռուսաստանի ռևոլյուցիան, մինչդեռ շահագործվողները, աշխատավոր մարդը «փառաբանում, հերոսացնում է ռուս ժողովրդին, մարդկության այդ մարտական ավանգարդին»[1]:

Պատմության ավելի քան հիսնամյա ընթացքը լիովին հաստատեց այս միանգամայն այժմեական խոսքերի ճշմարտացիությունը։

* * *

«Նոր խոսք»-ը (ինչպես և նրա նախորդ «Կայծ»-ը), ենթարկվեց ցարական կառավարության բազմաթիվ հալածանքներին։ Թիֆլիսի ժամանակավոր գեներալ-նահանգապետի 1906 թ. սեպտեմբերի 16-ի (29-ի) կարգադրությամբ փակվեց թերթը 15-րդ համարից։ Դրանից հետո մինչև 1907 թ. սկիզբը Անդրկովկասում հայերեն լեզվով բոլշևիկյան թերթ լույս չի տեսել։

Կոնսպիրատիվ նկատառումներով մի շարք հոդվածներ թերթում լույս էին տեսնում անստորագիր։

«Նոր խոսք» թերթի էջերում, ինչպես նշվեց, ազատ շարադրմամբ լույս է տեսել Վ. Ի. Լենինի միայն մեկ հոդվածը առանց ստորագրության։ Դա «Փոթորկից առաջ» խորագրով հոդվածն էր։

«Նոր խոսք»-ում տպագրվել են Ստ. Շահումյանից մի քանի հոդվածներ, առաջնորդողներ, մամուլի տեսություններ ու նամակներ։ Մոտավորապես նույնքան էլ լույս են տեսել Ս. Սպանդարյանից։ Դրանց մեծ մասը անստորագիր է։ Ստ. Շահումյանը ստորագրում էր «Ա.» ծածկանունով և ուղղակի «Ս. Շահումյան», իսկ Ս. Սպանդարյանը ստորագրում էր «ընկեր Տիմ.», «Տիմոֆեյ» և «Տ.» ծածկանուններով։

Ա. Մռավյանը «Նոր խոսք»-ում լույս տեսած իր հոդվածները ստորագրել է «Հրանտ» և «Ա.» ծածկանուններով։ «Գյուղական բանվոր» ծածկանունով է ստորագրել Երևանի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ գործիչներից Մ. Միրաքյանը։ Պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ Մ. Մելիքյանը իր պարտիական «Դեղուշկա» ծածկանունից բացի «Նոր խոսք»-ում ստորագրում էր «Մ.», «բանվոր Մ.», «Քեռի», «Բանվոր», «Պիերռ» ստորագրությամբ մի քանի հոդվածներ է զետեղել նաև բոլշևիկ Պետրոս Մնացականյանը, իսկ պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներներ Ա. Կախոյանը «Բանվոր Խեչո», Ս. Էլոյանը «Հաղպատցի», Դարբիել Սադաթյանը «Գարոն» ծածկանուններով։

«Հայ բոլշևիկ լրագրության և բոլշևիկ գեղեցիկ գրականության անդրանիկ առաքյալները, — գրել է իր հուշերում պոետ Հ. Հակոբյանը, — ահագին դեր ունեցան կատարելու հայ ժողովրդական մասսաների դասակարգային գիտակցության արթնացման և յուրացման մեջ»[1]։ Այդ հանգամանքը իրենց գրավոր ու բանավոր հուշերում բազմիցս ընդգծել են

---

[1] Տես «Նոր խոսք», № 12, 13 սեպտեմբերի, «Հեղափոխության անդրադարձումները» վերնագրով առաջնորդողը, ընդգծումը մերն է։

նաև ընկ. ընկ. Ա. Մռավյանը, Ա. Կարինյանը, Ա. Կախոյանը, Ա. Խումարյանը և բազմաթիվ այլ բոլշևիկներ։

Ուշագրավ հուշեր են պատմել նաև Անդրկովկասի զանազան քաղաքներում այն ժամանակ և այժմ աշխատող մի քանի բանվորներ-ընթերցողներ։ «Կայծ» և «Նոր խոսք» թերթերը մենք ագահությամբ կարդում էինք և ստանում մեր գաղափարական սնունդը»,— նշել են իրենց գրավոր ու բանավոր հուշերում Եգոր Վահրադյանը, Նիկոլ Գասպարովը, բանվոր Մինասը, Սաշա Խեչումյանը, Դադաշ Ավագովը, Նիկոլայ Վարդանյանը, Բագրատ Մկրտումյանը, Վաղլամ Սիմոնյանը, Մարո Զուրարյանը, Նիկողայոս Փիրումյանը, Ջավահիր Տեր-Պետրոսյանը, Փառանձեմ Կնունյանցը և ուրիշներ։

«Նոր խոսք» բոլշևիկյան թերթը ուրույն տեղ ունի հայ բոլշևիկյան մամուլի պատմության մեջ և արժանի է հանգամանալից ուսումնասիրության։

---

1 Հ. Հսկոբյան, Երկեր, Երևան, 1951, էջ 413։